ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

«10» «ապրիլ» 2023 թ. № 130-Լ

ԱՆԱԶԱՏ ԵՎ ԿԻՍԱԱԶԱՏ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՊԱՀՎՈՂ ՎԱՅՐԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԿԱՐՄԻՐ ԳՐՔՈՒՄ ԳՐԱՆՑՎԱԾ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ ՊԱՀԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ՆՐԱ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄՆ ՈՒ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 745-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 20-րդ ենթակետը և շրջակա միջավայրի նախարարի 2023 թվականի մարտի 27-ի N111-Ն հրամանը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄԵՄ՝

1. Ստեղծել անազատ և կիսաազատ պայմաններում պահվող վայրի կենդանիների, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում գրանցված կենդանիների պահելու թույլտվության համար մասնագիտական եզրակացություն տրամադրող հանձնաժողով (այսուհետ՝ Մասնագիտական հանձնաժողով):

2. Հաստատել՝

1) Մասնագիտական հանձնաժողովի անհատական կազմը՝ համաձայն հավելված N 1-ի,

2) Մասնագիտական հանձնաժողովի աշխատակարգը՝ համաձայն հավելված N 2-ի:

Հ. ՍԻՄԻԴՅԱՆ

4/10/2023

X

ՀԱԿՈԲ ՍԻՄԻԴՅԱՆ

Signed by: SIMIDYAN HAKOB 3004840588

«10» ապրիլ 2023թ.
ք. Երևան

Հավելված N1
Շրջակա միջավայրի նախարարի
2023 թվականի

«10» ապրիլի N130- Լ հրամանի

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Տիգրան Գաբրիելյան	շրջակա միջավայրի նախարարի տեղակալ, Մասնագիտական հանձնաժողովի նախագահ,
Սևակ Բալոյան	շրջակա միջավայրի նախարարության կենսառեսուրսների կառավարման վարչության պետ, կենսաբանական գիտությունների թեկնածու,
Ոսկեհատ Գրիգորյան	շրջակա միջավայրի նախարարության բնության հատուկ պահպանվող տարածքների և կենսաբազմազանության քաղաքականության վարչության պետ,
Պավել Օրդյան	բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի խորհրդական, իրավագետ (համաձայնությամբ),
Արման Ասատրյան	սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի անասնանուժության վարչության պետ (համաձայնությամբ),
Հայկ Սերոբյան	սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի անասնաբուժության վարչության գլխավոր տեսուչ (համաձայնությամբ),
Սամվել Պիպոյան	Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, (համաձայնությամբ),
Արամ Աղասյան	Գիտությունների ազգային ակադեմիայի «Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության ավագ գիտաշխատող,

	կենսաբանական գիտությունների թեկնածու (համաձայնությամբ),
Անդրանիկ Գյոնջյան	Գիտությունների ազգային ակադեմիայի «Կենդանաբանության և հիդրոլոգիայի գիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության ողնաշարավոր կենդանիների լաբորատորիայի գիտաշխատող (համաձայնությամբ),
Գոռ Քլոյան	Գիտությունների ազգային ակադեմիայի «Կենդանաբանության և հիդրոլոգիայի գիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության ողնաշարավոր կենդանիների լաբորատորիայի կրտսեր գիտաշխատող (համաձայնությամբ),
Մարինե Առաքելյան	Երևանի պետական համալսարանի կենդանաբանության ամբիոնի վարիչ, կենսաբանական գիտությունների դոկտոր (համաձայնությամբ),
Աստղիկ Ղազարյան	Երևանի պետական համալսարանի կենդանաբանության ամբիոնի դոցենտ, կենսաբանական գիտությունների թեկնածու (համաձայնությամբ),
Տիգրան Հայրապետյան	Երևանի պետական համալսարանի ուսումնական լաբորատորիայի (կենդանիների բուժարան) վարիչ (համաձայնությամբ),
Լիանա Վարդանյան	Հայաստանի ազգային ագրարային համալսարանի մորֆոլոգիայի և կենդանագիտության ամբիոնի դոցենտ, անասնաբուժական գիտությունների թեկնածու, դոցենտ (համաձայնությամբ),
Աշոտ Ասլանյան	«Երևանի կենդանաբանական այգի» համայնքային ոչ առևտրային կազմակերպության գիտական գծով տնօրենի տեղակալ, կենսաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ (համաձայնությամբ),
Տաթևիկ Կիրակոսյան	շրջակա միջավայրի նախարարության կենսառեսուրսների կառավարման վարչության գլխավոր մասնագետ (հանձնաժողովի քարտուղար):

Հավելված N2
շրջակա միջավայրի նախարարի
2023 թվականի
« 10» ապրիլի N 130- Լ հրամանի

ԱՇԽԱՏԱԿԱՐԳ
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն աշխատակարգով կարգավորվում է անազատ և կիսաազատ պայմաններում պահվող վայրի կենդանիների, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում գրանցված կենդանիների պահման թույլտվության համար մասնագիտական եզրակացություն տրամադրող հանձնաժողովի գործունեության հետ կապված հարաբերությունները:

2. Մասնագիտական հանձնաժողովն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենսդրությամբ, շրջակա միջավայրի նախարարության կանոնադրությամբ, շրջակա միջավայրի նախարարի 2023 թվականի մարտի 27-ի N111-Ն հրամանով և սույն աշխատակարգով:

II. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

3. Մասնագիտական հանձնաժողովի գործունեության նպատակն է.

1) ֆիզիկական և իրավաբանական անձանց (այսուհետ՝ Հայտատու) կողմից ներկայացված անազատ և կիսաազատ պայմաններում պահվող վայրի կենդանիների, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում գրանցված կենդանիների պահման թույլտվության համար քննարկումների արդյունքում մասնագիտական եզրակացություն տրամադրելը,

2) անազատ և կիսաազատ պայմաններում պահվող վայրի կենդանիների, այդ թվում Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում գրանցված կենդանիների պահման թույլտվություն ստացած ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կողմից պահման թույլտվություն ստանալու համար Լիազորված մարմնին տրամադրած

գործունեության իրականացման վերաբերյալ ծրագրով (այսուհետ՝ Ծրագիր) ներկայացված կենդանու պահելու պայմանների կամ գործունեության իրականացման նպատակի փոփոխություն նախատեսելու դեպքերի վերաբերյալ մասնագիտական կարծիք տրամադրելը:

III. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

4. Մասնագիտական հանձնաժողովի գործունեությունը կազմակերպվում է նիստերի միջոցով (այդ թվում՝ հեռավար եղանակով), որոնք հրավիրվում են ըստ անհրաժեշտության:

5. Մասնագիտական հանձնաժողովի նիստերն իրավազոր են, եթե դրանց մասնակցում է հանձնաժողովի անդամների թվի կեսից ավելին:

6. Որոշումներն ընդունվում են Մասնագիտական հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

7. Ձայների հավասարության դեպքում Մասնագիտական հանձնաժողովի նախագահի ձայնը որոշիչ է:

8. Մասնագիտական հանձնաժողովի նախագահը՝

1) հրավիրում և վարում է Մասնագիտական հանձնաժողովի նիստերը,

2) ապահովում է Մասնագիտական հանձնաժողովի բնականոն գործունեությունը,

3) համակարգում է Մասնագիտական հանձնաժողովի աշխատանքը:

9. Մասնագիտական հանձնաժողովի նախագահի բացակայության դեպքում նրան փոխարինում է Մասնագիտական հանձնաժողովի անդամներից մեկը՝ Մասնագիտական հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ:

10. Մասնագիտական հանձնաժողովի անդամները.

1) մասնակցում են Մասնագիտական հանձնաժողովի նիստերին,

2) մասնակցում են համապատասխան մասնագիտական եզրակացության տրամադրման գործընթացին,

3) ծանոթանում են Մասնագիտական հանձնաժողովի նիստերի արձանագրություններին:

11. Մասնագիտական հանձնաժողովի անդամների կողմից, բացառությամբ Մասնագիտական հանձնաժողովի քարտուղարի, լրացվում և ստորագրվում է քվեաթերթիկ՝ համաձայն Ձև 1-ի:

12. Քվեաթերթիկը լրացվում է Հայտում և հայտին կից ներկայացված փաստաթղթերում ներառված յուրաքանչյուր կենդանատեսակի համար:

13.Մասնագիտական հանձնաժողովի անդամների առաջարկությամբ Մասնագիտական հանձաժողովին է տրամադրվում անցյալում տվյալ Հայտատուի կողմից՝ ստացած թույլտվությունների հիմքում առկա գործունեության իրականացման ծրագրերի պայմանների կամ կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործման պայմանագրերի պայմանների կամ անազատ և կիսաազատ պայմաններում պահվող վայրի կենդանիների պահելու և օգտագործման պայմանների մասով առկա խախտումների բնույթի և դրանց հաճախականության վերաբերյալ տեղեկատվությունը, ինչը թույլ կտա հանձնաժողովին կայացնել առավել հիմնավոր եզրակացություն:

14. Մասնագիտական հանձնաժողովն իր եզրակացությունը կայացնելիս հաշվի է առնում տվյալ անազատ և կիսաազատ պայմաններում պահվող վայրի կենդանիների, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում գրանցված

կենդանիների պահման հետ կապված այն բոլոր չափանիշները և սահմանափակումները, որոնք ապահովում են տվյալ կենդանատեսակի բնականոն կենսագործունեությունը, ինչպես նաև տվյալ կենդանատեսակի անհատական և տեսակային առանձնահատկություններից բխող ու գոյատևման համար անհրաժեշտ կարիքները բավարարող պայմանների համապասխանելիությունը:

15. Մասնագիտական հանձնաժողովը քննության է առնում և գնահատում հայտում ու կից փաստաթղթերում ներկայացված տեղեկատվությունը, Հայտատուի կողմից ներկայացված Ծրագիրը՝ Մասնագիտական հանձնաժողովի անդամների առաջարկությամբ քննարկմանը մասնակից դարձնելով Հայտատուին:

16. Մասնագիտական հանձնաժողովն անհրաժեշտության դեպքում կարող է այցելել և տեղում ստուգել Հայտատուի կողմից ներկայացված տեղեկատվության իսկությունը:

17. Մասնագիտական հանձնաժողովի քարտուղարը՝

1) մասնակցում է Մասնագիտական հանձնաժողովի նիստերին,

2) նախապատրաստում է հանձնաժողովի նիստերի անցկացումը,

3) հայտը ու դրան կից ներկայացված փաստաթղթերը ներկայացնում է Մասնագիտական հանձնաժողովի քննարկմանը սույն կարգի 18-րդ կետով սահմանված ընթացակարգով,

4) կազմում է Մասնագիտական հանձնաժողովի նիստի արձանագրությունը և էլեկտրոնային փոստով տրամադրում է Մասնագիտական հանձնաժողովի անդամներին,

5) ամփոփում և Մասնագիտական հանձնաժողովի նախագահին է ներկայացնում քվեարկության արդյունքները,

6) վարում է մասնագիտական եզրակացությունների վերաբերյալ տարեկան կտրվածքով էլեկտրոնային մատյան՝ համաձայն Ձև 3-ի:

18. Մասնագիտական հանձնաժողովի քարտուղարը նիստի օրակարգը և քննարկվելիք հարցերի վերաբերյալ անհրաժեշտ նյութերը, որպես կանոն, Մասնագիտական հանձնաժողովի անդամներին է հանձնում ոչ ուշ, քան նիստից երեք օր առաջ՝ էլեկտրոնային փոստի միջոցով:

19. Մասնագիտական հանձնաժողովի նիստի արդյունքում կազմված արձանագրությունն ստորագրվում է Մասնագիտական հանձնաժողովի նախագահի և Մասնագիտական հանձնաժողովի քարտուղարի կողմից:

20. Մասնագիտական հանձնաժողովը, հայտը և կից փաստաթղթերն ստանալու օրվանից ոչ ուշ քան 20 աշխատանքային օրվա ընթացքում Կենսառեսուրսների կառավարման վարչություն է ներկայացնում եզրակացություն՝ համաձայն Ձև 2-ի՝ հիմք ընդունելով Մասնագիտական հանձնաժողովի անդամների կողմից լրացված և ստորագրված քվեաթերթիկների արդյունքները:

21. Մասնագիտական հանձնաժողովը յուրաքանչյուր տարվա վերջում Մասնագիտական հանձնաժողովի աշխատանքների մասին հաշվետվությունը ներկայացնում է շրջակա միջավայրի նախարարին:

IV. ՀԱՅՏԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԲԱՑԱՍԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՏՐՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

22. Բացասական եզրակացության հիմքերն են.

1) դիմողի կողմից հայտում և կից ներկայացված փաստաթղթերում իրականությանը չհամապատասխանող տեղեկատվությունը կամ տվյալների միտումնավոր չնշելը,

2) ներկայացված փաստաթղթերում և հայտում տեղեկատվության ոչ լիարժեք լինելը,

3) գործնեություն իրականացնելու վայրի, վանդակներում պահվող կենդանիների քանակի և տեսակի, կենդանատեսակի պահման համար նախատեսված տարածքի չափերի, կենսագործունեությունն ապահովելու համար անհրաժեշտ պայմանների բացակայությունը,

4) կենդանատեսակի պահման համար անհրաժեշտ սարքավորումների բացակայությունները,

5)վայրի կենդանիների սննդակարգի, բուժզննումների և բուժման, սանիտարահիգիենիկ պայմանների վերաբերյալ ոչ հիմնավորված տեղեկատվության առկայությունը,

6) անազատ և կիսաազատ պայմաններում պահվող վայրի կենդանիների, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում գրանցված կենդանիների անկմանը (ոչնչացմանը) կամ բնակմիջավայրի խախտմանը նպաստող այլ պատճառներ:

V. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄԸ

23. Մասնագիտական հանձնաժողովի գործունեությունը դադարում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Ձև1

ՔՎԵԱԹԵՐԹԻԿ

ԱՆԱԶԱՏ ԵՎ ԿԻՍԱԱԶԱՏ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՊԱՀՎՈՂ ՎԱՅՐԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԿԱՐՄԻՐ ԳՐՔՈՒՄ ԳՐԱՆՑՎԱԾ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՊԱՀՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄԻ

Հ/հ	——————— **կենդանատեսակի պահման գործընթացի վերաբերյալ տեղեկատվություն**	ԱՅՈ	ՈՉ
	1.Դիմողի կողմից հայտում և կից ներկայացված փաստաթղթերում ներառված տեղեկատվությունը համապատասխանում է իրականությանը և լիարժեք է		
	2. Կա համապատասխանություն գործնեություն իրականացնելու վայրի, վանդակներում պահվող կենդանիների քանակի և տեսակի, կենդանատեսակի պահման համար նախատեսված տարածքի չափերի, կենսագործունեությունն ապահովելու համար անհրաժեշտ պայմանների միջև		
	3. Կենդանատեսակի պահման համար անհրաժեշտ սարքավորումների առկայություն		
	4. Վայրի կենդանիների սննդակարգի, բուժզննումների և բուժման, սանիտարահիգիենիկ պայմանների վերաբերյալ առկա է հիմնավորված տեղեկատվություն		
	5. Կա համապատասխանություն առանձնյակների անհատական և տեսակային առանձնահատկություններից բխող ու գոյատևման համար անհրաժեշտ կարիքները բավարարող պայմանների միջև		
	6.Այլ պատճառներ, որոնք կարող են բերել անազատ և կիսաազատ պայմաններում պահվող վայրի կենդանիների, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում գրանցված կենդանիների անկմանը (ոչնչացմանը) կամ բնակմիջավայրի խախտմանը _____ _____ _____ _____ _____ _____ _____		

Մասնագիտական հանձնաժողովի անդամ՝ _____

(ստորագրություն) (անուն,ազգանուն)

_____

(ամիս,ամսաթիվ)

Ձև 2

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N-

ԱՆԱԶԱՏ ԵՎ ԿԻՍԱԱԶԱՏ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՊԱՀՎՈՂ ՎԱՅՐԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԿԱՐՄԻՐ ԳՐՔՈՒՄ ԳՐԱՆՑՎԱԾ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՊԱՀՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

«----» _____ 202 թ.

Կայացել է Մասնագիտական հանձնաժողովի N -- նիստը, որտեղ քննարկվել է _____ կողմից անազատ և

(Իրավաբանական անձի անվանումը կամ ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը)

կիսաազատ պայմաններում պահվող վայրի կենդանիների, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում գրանցված կենդանիների պահման թույլտվության տրամադրման գործընթացը: Ներկայացվել է _____

_____

_____

_____ կենդանատեսակների պահման թույլտվություն ստանալու հայտ:

Հայտը բավարարվել է _____

_____

կենդանատեսակների համար, քանի որ

_____

_____

_____:

Հայտը չի բավարարվել _____

_____

կենդանատեսակների համար, քանի որ

_____

_____

_____:

Հանձնաժողովի նախագահ _____

(ստորագրություն) (անուն, ազգանուն)

Հանձնաժողովի անդամներ _____

(ստորագրություն) (անուն, ազգանուն)

(ստորագրություն) _____

(անուն, ազգանուն)

Ձև 3

ՄԱՏՅԱՆ
ԱՆԱՋԱՏ ԵՎ ԿԻՍԱԱՋԱՏ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՊԱՀՎՈՂ ՎԱՅՐԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԿԱՐՄԻՐ ԳՐՔՈՒՄ ԳՐԱՆՑՎԱԾ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՊԱՀԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ

Հ/Հ	Մասնագիտական եզրակացության ամիսը, ամսաթիվը	Մասնագիտական եզրակացության համարը,	Հայտատու անվանում/ իրավաբանական անձի դեպքում անվանումը, ֆիզիկական անձի դեպքում՝ անունը,ազգանունը/	Ծանոթություն